## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

---

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 25-Ա

«31 » հուլիսի - 2019թ. թիվ 6 նիստ

### ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի ավագանու 2019 թվականի հուլիսի 31-ի թիվ 6 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ ( 3 ) | Դեմ ( 0 ) | Ձեռնպահ ( 0 ) |
|---|---|---|---|
| Յուրիկ Ասլանյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Գարիկ Գևորգյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Նարեկ Սիմոնյան | -------------------- | -------------------- | ---------------- |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ -------------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2019 թվականի հուլիսի «31 »
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 11 ⁰⁰

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղ
համայնքի ավագանու 2019 թվականի
հուլիսի 31 -ի թիվ 6 նիստի
N 25-Ա որոշման

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1) Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի ավագանու 2019 թվականի հուլիսի 31-ի թիվ 6 նիստի օրակարգը հաստատելու մասին.
2) Դրամական օգնություն հատկացնելու մասին.
3) Համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումն իրականացնելու և համայնքի հողերի հաշվեկշիռը կազմելու մասին.
4) Համայնքապետարանի տարածքում առկա ազդարարման համակարգի սարքավորումներն և դրանց լրակազմերը համայնքի հաշվեկշռում հաշվառելու մասին.
5) Բյուջեում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 26-Ա**

«31» հուլիսի - 2019թ. թիվ 6 նիստ

**ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի սոցիալապես անապահով մի քանի բնակիչների հատկացնել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

| | Կողմ ( 3 ) | Դեմ ( 0 ) | Ձեռնպահ ( 0 ) |
|---|---|---|---|
| Յուրիկ Ասլանյան | ------------------ | ------------------ | ------------------ |
| Գարիկ Գևորգյան | ------------------ | ------------------ | ------------------ |
| Նարեկ Սիմոնյան | ------------------ | ------------------ | ------------------ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ------------------ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2019 թվականի հուլիսի «31»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 11 30

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղ
համայնքի ավագանու 2019 թվականի
հուլիսի 31-ի թիվ 6 նիստի
26-Ա որոշման

# Ց ՈՒ Ց Ա Կ

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1) Նարեկ Գալոյանին - 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ.
2) Գյոզալ Խաչատրյանին - 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ.
3) Աշոտ Առաքելյանին – 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

---

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 28-Ա**

**«31» հուլիսի - 2019թ.** **թիվ 6 նիստ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՐԱԿԱԶՄԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի, Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարելու դեպքում ու ռազմական դրության պայմաններում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, բնակչության ազդարարման և իրազեկման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 346-Ն որոշման հավելվածի 21-րդ և 22-րդ կետերի պահանջները.

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի համայնքապետարանի տարածքում առկա Ս-40 մակնիշի էլեկտրական շչակը և դրա լրակազմ հանդիսացող Պ-164 մակնիշի կառավարման վահանակը՝ որպես գույքային արժեք, հաշվառել համայնքի հաշվեկշռում:
2. Սահմանել, որ վերը նշված ազդարարման համակարգի սարքավորումների պահպանման և սպասարկման համար պատասխանատու են հանդիսանում՝
   ա) համայնքի քաղաքացիական պաշտպանության շտաբի պետը,
   բ) համայնքի քաղաքացիական պաշտպանության կապի և ազդարարման խումբը:
3. Սույն որոշումը հայտարարել ըստ առնչության:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի ղեկավարին:
5. **Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:**

| | Կողմ ( 3 ) | Դեմ ( 0 ) | Ձեռնպահ ( 0 ) |
| --- | --- | --- | --- |
| Յուրիկ Ասլանյան | --------------------- | --------------------- | ---------------- |
| Գարիկ Գևորգյան | --------------------- | --------------------- | ---------------- |
| Նարեկ Սիմոնյան | --------------------- | --------------------- | ---------------- |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ -------------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2019 թվականի հուլիսի «31 »
գ. Լուսագյուղ
Ժամը՝ $12^{30}$

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 29-Ն

«31» հուլիսի - 2019թ. թիվ 6 նիստ

## ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, 90-րդ հոդվածի 6-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, երրորդ մասով, և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 6-ի «2019 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 36-Ն որոշման մեջ կատարել լրացումներ և փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ

| | Կողմ (3) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|---|
| Յուրիկ Ասլանյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Գարիկ Գևորգյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Նարեկ Սիմոնյան | -------------------- | -------------------- | ---------------- |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ -------------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2019 թվականի հուլիսի «31»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 13⁰⁰

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի
2019 թվականի հուլիսի 31-ի
թիվ 6 նիստի N 29 -Ն որոշման

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 06-Ի ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ ԹԻՎ 36-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԿԱՏԱՐԵԼ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. 2019թվականի համայնքի բյուջեի տնտեսագիտական դասակարգման `(Հատված 3) «Գ. Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր» բաժնում կատարել լրացումներ`

1/ «Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր »`( տող 6130), 8131 հոդվածի գումարը հաստատել 136140 Հայաստանի Հանրապետության դրամ,

2/ «Հողի իրացումից մուտքեր » ( տող 6410), 8411 հոդվածի գումարը հաստատել 9194490 Հայաստանի Հանրապետության դրամ,

2. 2019 թվականի համայնքի բյուջեի ծախսային մասում կատարել լրացումներ և փոփոխություններ .

1/ գործառական դասակարգման բաժին 09, խումբ 2, դաս 2 ծրագրի տնտեսագիտական դասակարգման 5113 հոդվածի թիվը հաստատել 2000 000 Հայաստանի Հանրապետության ՀՀ դրամ,

2/ գործառական դասակարգման բաժին 09, խումբ 2, դաս 2 ծրագրի տնտեսագիտական դասակարգման 5122 հոդվածի թիվը հաստատել 1000 000 Հայաստանի Հանրապետության ՀՀ դրամ,

3/ գործառական դասակարգման բաժին 09, խումբ 2, դաս 2 ծրագրի տնտեսագիտական դասակարգման 4239 հոդվածի թիվը հաստատել 1000 000 Հայաստանի Հանրապետության ՀՀ դրամ,

4/ գործառական դասակարգման բաժին 09, խումբ 1, դաս 1 ծրագրի տնտեսագիտական դասակարգման 4511 հոդվածի «2960 000» թիվը փոխարինել «1710 000» թվով,

5/ գործառական դասակարգման բաժին 09, խումբ 2, դաս 2 ծրագրի տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածի թիվը հաստատել 250000 Հայաստանի Հանրապետության ՀՀ դրամ,

6/ գործառական դասակարգման բաժին 11, խումբ 1, դաս 2 ծրագրի /ֆոնդային բյուջեի պահուստային ֆոնդ/ տնտեսագիտական դասակարգման 4891 հոդվածի «500 000» թիվը փոխարինել «6830630» թվով: